




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ

ՏԱՍՆՕՐԵԱՅ


Գիտական, Գրագիտական, Արուեստագիտական
և Մանկավարժական



1902 ԱՊՐԻԼ 10 — ԹԻԻ 17

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տպարանս փոխադրուած է Պապր ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ լրագրին դէմ:



THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
JAN 28 1908
CHICAGO, ILL.



ՀԱՆՐԱԳԻՏ
ՏԱՍՆՕՐԵԱՅ

هائراکیداغ
مجموعه علوم

HANRAKIDAGUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

ԶԱՏԻԿԻ ԹԻԻ

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 17

10 ԱՊՐԻԼ 1902

ՄԵՐ ՏՂԱՔՆԵՐՈՒՆ

Մայերը կ'երգեն . « Քրնացի'f , սրղա'f ,
Եւ , անմեղութեան մեջ ուր կը լողա'f ,
Զուարթ երազներ ձեր անուշ բունն օրենն .
Կեանքի պատրանքին , հեռագին կարի ,
Թո՛ղ ձեզի համար վայելին երկարի ,
Եւ զարթնումի ժամն հասնի յուլորեն » :

« Խողացի'f , դուք որ սնիք ժամանակ .
Թո՛ղ ձեր ժրպիտն ալ , ջինջ ու գեղունակ ,
Մեր ձրկեռն ընէ մտաւտն գարուն .
Ձեր աչիքն նայուածքն՝ անապակ , անխառն ,
Ձեր ձայնն՝ որ աղու , մայի՛ իբրեւ գառն ,
Թող ցունց սան խրոսկ մեր հոգիներուն » :

« Խայացի'f , անվոյր , յուսալից , կայտառ ,
Ձե՛րն եւն երգ ու խինդ , ծաղկունք , լեռ , անտառ ,
Փունջեր կապեցէք վարդի խնկաբոյր .
Ձեզմո՛վ փառասի մեզք մեր համբուն ,
Դուք մեր խղճե՛րն եւ գրգուռի՛ , սրովո՛ւն ,
Մեր կեանքին աղբիւրն , արե՛ւն ու հրապոյր » :

Տրղա'f սիրուն ,
Մեր տուններուն ,
Ըզձեզ՝ Աստուած
Է պարգեւած .
Ձեր կոյս հոգին
Անբիծ , անգի'ն ,
Լոյս մ'է գոր էն
Տայ մեզ վերեն :

Տրգիտութիւնն իսկ է Պրսակն այն պատեցի
Որ բոլորէ ձեր նակիքն հեքն ոսկեգանգուր ,
Ձեր զարմացկոտ աչերէն ի՞նչ քաղցր աւելի ,
Ի՞նչ վրսեմ քան ձեր նայուածքը սրբամաքուր :

Տրղա'f սիրուն ,
Մեր տուններուն
Ըզձեզ՝ Աստուած
Է պարգեւած .
Ձեր կոյս հոգին
Անբիծ , անգին ,
Լո՛յս մ'է գոր էն .
Տայ մեզ վերեն :

ԱՂՆԲՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

ՀԱԿԻԹՆԵՐՈՒ ՏՕՆԸ

ԿԱՄ

ՁԱՏԻԿՆ ՈՒ ԿԱՐՄԻՐ ՀԱԿԻԹԸ

Թէ՛ դուտի՞ ծագում առած է Ձատիկի տօնը հաւկիթով փառաւորելու կամ կատարելու սովորութիւնը: Այս մասին թէեւ երբեմն տուած էինք տեղեկութիւն մը, որ կը վերաբերէր մի միայն հաւկիթին դիցաբանական խորհրդանշանին. սակայն որովհետեւ Փրանսերէն առած մը կայ որ կ'ըսէ. — Donner à quelq'un les œufs de Pâques . որ կը նշանակէ մէկու մը՝ սալ Ձատկուան հաւկիթները, եւ այս առածին միտքն ալ սա ըսել կ'ուզէ, Ձատիկի ատեն մէկու մը տալ պզտիկ նուէր մը, այս անգամ սոյն առածն առիթ տուած է որ Ձատիկին հաւկիթով տօնելու սովորութեան նկատմամբ նոր մեկնութիւն մ'ալ աւելցուի, իմաստնոց հնագիտական կարծեաց համաձայն:

Մեկու մը՝ սալ զատկուան հաւկիթները. որ ինչպէս ըսինք, Ձատիկին մէկու մը պզտիկ նուէր մը տալ ըսելու սովորոյթ է ծագած է սա պատմական դէպքէն:

Թէ՛ Եւրոպայի թէ՛ Ասիայի երկրագործ ժողովուրդները հին ատեն սովորութիւն ունէին հաւկիթ ուտելով տօնել նոր տարին, և հաւկիթն ալ մէկ կարեւոր մասը կը կազմէր այն նուէրներուն՝ զորս իրարու կը պարգեւէին նոր տարւոյն առթիւ:

Եւ սովոր էին այս նուէրացու հաւկիթները այլ եւ այլ գոյներով ներկել, նամանաւանդ կարմիր գոյնով, որ, ինչպէս բոլոր ժողովուրդոց, եւ մասնաւորապէս՝ Գաղիացւոց նախնիքն եղով կեղտաց համար, շատ սիրելի ու նախապատիւ էր: Սակայն այն ատեն տարին կը տօնուէր դարնան գիշերի եւ ցեղեկի հաւասարութեան ատեն, որ ըստ Եւրոպացւոց Մարտ 21ին կը կատարուէր, այսինքն այն ժամանակին ուր արեւմտեան քրիստոնէայք Ձատիկը մի միայն կը տօնէին, մինչդեռ նոր տարին տօնը փոխադրուած է ձմեռուան արեւադարձին, այս ժամանակագրական փոփոխման դէպքէն ծնունդ առած է Ձատիկի տօնը հաւկիթով կատարելու սովորութիւնը քրիստոնէից քով, զի նոր տա-

րին տօնելու սովորութիւնը ուրիշ ժամանակի փոխադրուած է, սակայն հաւկիթին սովորութիւնը կապուած մնաց հին տարեգլխին տօնին յաջորդող Ձատկական տօնին հետ:

Սակայն սովորութեան պարզ արդիւնքի մը հետեւանք չէ լսկ այդ դէպքը, այլ սա բանաւոր պատճառով է որ ի՞նչ տառանձնաշնորհումներ որ կ'ընծայէին հին տարեգլխին նոյնքը կ'ընծայէին նաեւ Ձատիկի տօնին. այսինքն այդ տօն օրը թէ՛ ինչպէս հնոց համար, ինչպէս Պարսից մէջ, նոյնպէս եւ Քրիստոնէից համար ամէն բաներու վերանորոգման մը թուականը համարուած էր. եւ ամէն բաներու վերանորոգման մը առաւելութեանց գաղափարին հետ կը միանան մէկ կողմանէ ֆիզիքական արեւուն յաղթանակի եւ միւս կողմանէ Արդարութեան Արեգակին, աշխարհի Փրկչին մեղեքներէն յարութեամբ մահուան վրայ տարած յաղթանակի գաղափարաց հետ. ինչպէս բնութեան՝ նիւթապէս, նոյնպէս մարդկութեան՝ բարոյապէս վերանորոգումի տօնը եղաւ Ձատիկի:

Հաւկիթները՝ հին Եգիպտացւոց համար, ջրհեղեղէն յետոյ աշխարհի մը վերանորոգման նշանակ էր:

Հրէաները՝ Եգիպտոսէն ելքովը իրենց աղգին վերանորոգման մը իբր խորհրդանշան նկատեցին հաւկիթը, և զատիկի տօնի ատեն զատկական գառան հետ իրենց սեղանին վրայ կը դնէին հաւկիթը: Քրիստոնեաներն ալ հաւկիթները դրածածեցին իբր խորհրդանշան վերստին յարութեան որուն օրինակն ու պատուէրն անոնց տուած էր Յիսուս եւ բոլոր զանազան գոյներէն որով կը ներկէին հիւնքը, նախապատիւ համարեցին կարմիր գոյնը ի յիշատակ խաչին վրայ Անոր արիւնին թափուելուն:


Չմոռնանք ըսել թէ Հնդկիներն ու Պըրսիանք կը հաւատային թէ տիեզերքը հաւկիթէ մը ծնած է, այնպէս որ իբր թէ հաւկիթին մէկ կեղեւովը երկինքը և միւս կէսովը ցամաքը, իսկ մէջի հեղուկովը՝ ծովն ստեղծուած են: Ըսել է ի սկզբանէ անտի հաւկիթը՝ կրօնական կամ դաւանական խորհրդաւոր նշանակներու մէջ մեծ և գլխաւոր տեղ մը բռնած է:



ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՆԵՆՈՅ

- « Արեգն արդար ինչո՞ւ ժպտիս ,
Փրկարա՞ր լուր ձօնես արտիս ,
Ո՞ւր է Փրկիչն որ եր գալոց » :
- « Քրիստոս յարեալ ի մեռելոց » :
- « Լուսին արծաթ ինչո՞ւ խնդաս ,
Ո՞վ տուալ քեզ հրնուանաց դաս ,
Յորո՞ւմ է այս փու սիրոյդ բոց » :
- « Քրիստոս յարեալ ի մեռելոց » :
- Լոյսեր երկնից ակամակուռ
Մեղմիկ ժպտով փայլին ձեր հուր .
Շիջեցա՞ն ձեր արտերու բոց » :
- « Քրիստոս յարեալ ի մեռելոց » :
- Նրկիր ցնծուն աւետաբեր ,
Դո՞ւն ալ մոռցար Փրկչին ցաւեր ,
Զայն քաղեցին ի սուրբ էն ծոց » :
- « Քրիստոս յարեալ ի մեռելոց » :
- Որդւոց մարդկանց նոր աւետիս ,
Ուրախ լուրեր տուին արտիս
Թո՞ղ բացուին մեր արտերն գոց ,
Քրիստոս յարեալ ի մեռելոց » :

Թ. Կ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ



Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐՆ

ԿՍՄ

Ս. ԳԵՐԵՉՄԱՆԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Երբ Կոստանդիանոս իր բարեպաշտ մօր-
մէն խնայալ թէ՛ կռապաշտական տաճար-
ները փլցուելով՝ ներքեւէն երեւան հանած
են քրիստոնէական Սրբարանք , խորոյն գրեց
երուսաղիմայ եպիսկոպոսին եւ հրամայեց որ
այն տեղ մայր եկեղեցի մը կառուցանէ ու
զանի աշխարհի գեղեցկագոյն եկեղեցիներէն
մին ընելու համար բան մը չխնայէ : Յով-
սեպոս մանրամասնօրէն նկարագրած է այս
մայր եկեղեցին որ 326 ին սկսուելով 335
թուականին աւարտեցաւ : Առաջակողմը նա-
խադռներով ներքին ընդարձակ կամարակապ
սրահներով զարդարուած էր ու հինգ միջա-


վայրերով մայր եկեղեցի մը ունէր՝ որոյ
մուտքն՝ դիրքին պահանջման պատճառաւ
արեւելակողմն էր : Սուրբ Գերեզմանն գըմ-
բէթաւոր չքեղ շէնքի մը մէջ առնուած էր ,
իսկ Գողգոթա հարաւային կողմնական տա-
ճարներէն մէկուն մէջ կը գտնուէր : Գիւտ
Ս. Խաչի մատուռը ներքին կամարակապ սը-
րահի մը ներքեւ կը տարածուէր : Կոստան-
դիանոսի եւ իր մօր փափաքանաց համաձայն
արհեստի բոլոր ճարտարութիւնը շուրջուե-
ցաւ ու ամէնէն թանկագին մետաղներն ու
ամէնէն հազուագիւտ մարմարիոնները գոր-
ծածուած լինելով՝ արդարեւ արժանի շէնք
մը եղած էր իր զարթուցած յիշատակներու
մեծ վայելչութեան : Մանաւանդ Ս. Գերեզ-
մանն , որ շէնքին գլխաւոր կէտն էր ու գըմ-
բէթի կեդրոնը կը բարձրանար , անօրինակ
չքեղութեամբ զարդարուած էր : Դժբաղդա-
բար , զայն որոշ աղօթավայր մը ընելու եւ
կից ժայռերէ անջատ ընելու համար , բո-
լորտիքը գտնուած հողը փորել ու հարթել
պէտք եղաւ : Եւ որպէս զի բազմակիւնի
ձեւ մը առնու , Գերեզմանի իրրեւ գաւիթ
ծառայող այրը ջնջեցին :

Սուրբ Գերեզմանի այսպէս պահուած ու
զատուած ժայռն եւս մարմարիոններու եւ
թանկագին մետաղներու ներքեւ աներևոյթ
եղաւ , եւ արտաքուստ զարդարուեցաւ սիւ-
ներով , նոյնպէս Գողգոթայի ժայռն եւս տա-
շելով ու բնական անհարթութիւնները ուղ-
ղելով՝ դազաթը փոքր սարահարթ մը ձե-
ւացուցին ու վրան մատուռ մը կանգնեցին՝
զոր չքեղ կերպով մը զարդարեցին , մինչ-
դեռ կողերուն վրայ այր մը կար՝ որ ապա
ուրիշ աղօթավայր մը եղաւ : Աւելի լաւ կըլ-
լար եթէ ճարտարապետն փոխանակ այս ե-
կեղեցին կառուցանելու՝ ու այս տեղերու
նախկին վիճակը փոփոխելու , զայն միայն
չըջապատէ՝ մէջ առնելով՝ զոր կրնար ուղա-
ծին պէս զարդարել , անփոփոխ թողուր Ս.
Գերեզմանի եւ Գողգոթայի մերկ ու ան-
տաշ ժայռերն :

335 թուականին սոյն մայր եկեղեցին օ-
ծելով՝ Մարտիրոս կամ Վկայ անուանեցին ,
որովհետեւ Յիսուսի վեհափառ չարչարանաց
ու մահու նուիրական վկայարաններն իր մէջ
կը սլարուենակէր :

Սոյն հոյակապ շէնքը , մին քրիստոնէու-

Թեան փառքերէ, իր կամարակապ սրահներով, սիւներու անտառով, մարմարիտներով եւ անգին մետաղներով, նկարներով ու մօզայիքներով զրեթէ ամբողջովին կործանեցաւ 604 թուականին: Արդարեւ այդ թուականին Պարսից տիրապետ Խիսրէվ Բ. մեծ բանակի մը գլուխն անցած՝ որուն միացան 26,000 Հրեայ, եկաւ ու Երուսաղէմն առնելով՝ ամէն ինչ հրոյ եւ սրոյ ճարակ տրւան: Ս. Յարութեան տաճարն հիմնայաւորակ



Ս. Յարութեան Տաճարի նակասն ու դուռը

կործանեց եւ ճշմարիտ Խաչափայտը հետը տարաւ: Բայց ապա Հերակլէս կայսրն՝ անոր որդւոյն յաղթելով՝ Խաչափայտն առաւ եւ սոյն անգին մատուռն Երուսաղէմ բերելով՝ 629 տարւոյ Սեպտեմբերին Ս. Յարութեան նորաշէն Տաճարին մէջ դրաւ: Սոյն տաճարը կառուցանել տուած էր պարզ կրօնաւոր մը, ի յետոյ Երուսաղէմի Պատրիարք եղաւ: Եւ

որովհետեւ Կոստանդիանոսի նման ամէն միջոց եւ հարատուութիւն չունէր, ուստի չկրցաւ միակ եւ անհուն շէնքի մէջ մը առնել ընդ Սրբատեղիներն, ինչպէս էր առաջին Տաճարն, ապա աւելի համեստ — Համեստ էր եւ իր անունն — յատակագծի մը հետեւելով՝ չորս փոքր եկեղեցիներ կառոյց, որոնք որմերով իրարու կապուած էին եւ ամէնքն ալ մարմարիտով սալայատակուած միեւնոյն գաւթի վրայ էին: Սոյն չորս եկեղեցիներուն առաջինը կը կոչուէր Ս. Յարութիւն, ուր կը գտնուէր Ս. Գերեզմանն. երկրորդն՝ Գողգոթա՝ որ խաչելութեան տեղւոյն վրայ շինուած էր. երրորդն՝ Գիւս Խաչ՝ այն տեղն ուր գտնուեցաւ Ս. Խաչը. չորրորդը՝ Ս. Ասուածածիւն՝ որու տեղը այժմ ստուգիւ չգիտցուիր, միայն կը կարծուի թէ՛ այս տեղ կը գտնուէր Օծման վէմը: Կոստանդիանոսի եկեղեցին ի հիմանց կործանած չէր, այլ կարեւոր բեկորներ մնացած էին, որոնցմէ մեծ օգուտ քաղուեցաւ Տաճարին նորոգ կառուցման ժամանակ:

637 թուականին Երուսաղէմ Մահմետականաց անցաւ: Օմար Ամիրապետն, քաղաք մտնելով՝ ամենայն վեհանձնութեամբ եւ ազնուութեամբ վարուեցաւ քրիստոնէից հետ, անոնց ստացուածքներու եւ քրիստոնէական Սրբավայրերու, Ս. Յարութեան Տաճարին եւ եկեղեցիներուն չփխսեց. եւ հրամայեց որ ազատ պաշտեն իրենց կրօնքն:

Շարլմայն, 800 թուականին, Երուսաղէմ առաւ ստակ զրկեց. որպէս զի եկեղեցիները նորոգուին եւ լատինական վանք մը կառուցանել տուաւ: Հարուն էլ Բաշիտ ամիրապետն՝ Ս. Գերեզմանի բանալիները Շարլմայնի կը պարգեւէ, եւ Ս. Տեղեաց պաշկանութեան եւ սեփականութեան իրաւունքն եւս անոր կուտայ. ահա՛ ատկից մնացած է Լատինացոց սեփականութիւնն Ս. Տեղեաց վրայ:

Կոստանդիանոսի Մայր Եկեղեցւոյ տեղւոյն վրայ կառուցուած չորս եկեղեցիներն 1010 թուականին կործանեցան: 37 տարի յետոյ Կոստանդիանոս Բ. կայսր՝ Մոնոմաքոս անուանեալ, նորոգ կառոյց:

1099ին իրարմէ անջատ չորս եկեղեցիները միակ մեծ շէնքի մը մէջ առնուեցաւ մասամբ ալ նորոգ կառուցուեցաւ, ի բաց

առեալ Ս. Աստուածածնայ եկեղեցին Գիւտ Ս. Խաչի եկեղեցւոյ վրայ քիչ նորոգութիւն եղաւ, որ ասորերկեայ դիրքին պատճառաւ շատ վնասուած չէր: ԺԱՐԳ. դարու շինութիւնն ընդարձակ գմբէթ մըն էր, որուն երեք եւ կը գտնուէր Ս. Գերեզմանն եւ միւս երեք եկեղեցիներն: Այս ժամանակ շինուեցաւ տաճարին թեւն ու իր գմբէթը, Յունաց արդի եկեղեցին եղող դուռը, հարաւային մեծ ճակատն՝ իր շքեղ ծնօտով, խաչածեւ պատուհաններով, գեղեցիկ զոյգ դռներով եւ վերջապէս զանգակատունով:

1187 թուականին Օսմանցւոց ձեռքն անցաւ, եւ Ս. Յարութեան Տաճարը անեղծ պահուեցաւ Սալահէտտին Սուլթանի հրամանով:

1244ին կործանեցաւ սոյն տաճարն, եւ երկար ժամանակ այնպէս անխնամ վիճակի մէջ մնալէ ետքը 1342 թուականին կարևոր փոքր նորոգութիւններ եղաւ եւ 1555ին Եւրոպական Տէրութիւններու նուէրներով Ս. Գերեզմանի շէնքը նորոգ կառուցուեցաւ: 1719 թուականին Լատինք, Կայսերական Կառավարութենէն հրաման առնելով՝ մեծ գմբէթն եւ միւս մատուռները շինեցին:


1808 տարւոյ սեպտ. 30ին գիշերը, սուրկալի հրդեհ մը ծագեցաւ, որ ամենի մոլեգնութեամբ տարածուելով՝ բոցերը պատեցին գմբէթը, որ սաստիկապէս ազմուկով փլաւ՝ իր ներքեւ տապալելով ու ջախջախելով այն սիւներն՝ որոնց վրայ կը բարձրանար Ս. Գերեզմանի շէնքն: Յոյները Բ. Դռնէն հրաման առնելով այրած ու վնասուած տեղերը նորոգ կառուցին:

1852ին մեծ գմբէթն, թէեւ հաղիւ 40 տարուան գործ, արդէն մեծապէս վնասուեր էր, իսկ տաք տարի յետոյ փլչելու վիճակին հասած, ուստի 1863 թուականին վերստին շինուեցաւ Օսմանեան մեծագոր Տէրութեան խնամք, Ֆրանսայի եւ Ռուսոյ Տէրութեանց դրամական մասնակցութեամբ, որուն համար 10 հազար Օսմ. ոսկի ծախք գնաց:

Սոյն համառօտ տեղեկութիւններէ յետոյ, սկսինք նկարագրել արդի Ս. Յարութեան Տաճարն իր ամբողջութեամբ, զանց առնելով այն տեղ կատարուած արարողութեանց եւ երեք ազգաց իրաւունքներու, սեփականութեանց նկարագրութիւնն: Փափագողք կըր-

նան կարգաւ մեր ասիէ առաջ ի լոյս ընծայած Տեղագրութիւն Ս. Նրուսաղէմի տնուն գրքին մէջ:

Ս. Յարութեան Տաճարի երկփեղկեայ մեծ դուռը, դէպ ի հարաւ կը նայի եւ ընդհանրապէս զոյգ կը մնայ: Դրան բանալին, ըստ համահաճ կատարեալ հաւանութեան՝ Հայոց, Յունաց եւ Լատինաց միաբանութեան, զոնապան Մահմետական Արաբացւոց քով կը պահուի: Հրամանաւ Օսմանեան



Քրիստոսի Ս. Պատանոսեղի

Տէրութեան՝ նոյն Արաբացի ընտանիքը յորդուց յորդի կը վայելէն այս իրաւունքը:


Դրան անմիջապէս ետեւը, ձախ կողմը բարձրաւանդակի մը նման եղած տեղը՝ դռնապանաց յատուկ է: Տաճարի մեծ դռան ուղղակի դիմացն է Քրիստոսի Պատանոսեղին, որ կարմրագոյն արապիգած եկեղեցիկ կընէայ քարով ծածկուած է: Հին ժամանակ

այս Ս. Տեղս հարթ հաւասար տեղ մըն էր, ի վերջոյ գեղեցիկ մօզայիքով զարդարուած էր, բայց այժմ քարով ծածկուած է:

Յովսէփ Արեմաթացի եւ Նիկողիմոս, Տէրն մեր Յիսուսը խաչէն վար առնելէն յետոյ, այս տեղը բերին պառկեցուցին եւ օծելով նորա Ս. Մարմինը պատեցին մաքուր կտաւով եւ ապա թաղեցին:

Ուժաթափման տեղէն քանի մը քայլ դէպ ի հիւսիս, աջ կողմը, առաջին կամարին արեւելեան ոտքին վրայ հաստատուած է յանուն Իւլաբեռ կանանց սեղանն: Հոս եկան իւղարեր կանայք միաշաբաթի առաւօտուն Յիսուսի մարմինը խնկելու համար, որ արդէն յարութիւն առած էր:

Նորաչէն մեծ դմբէթին ներքեւ, գմբէ-



Քրիստոսի Ս. Գերեզմանի արտաքին տեսքը

Պատանատեղիէն դէպ յարեւմուտք կը գտնուի Ուժաթափման տեղին, որ երկաթեայ բոլորակ եւ գմբէթաւոր վանդակի մը մէջ առնուած է. ըստ աւանդութեան՝ Մարիամ Ս. կոյսն, այս տեղէն առաջին անգամ իր միածին որդին Յիսուսը խաչին վրայ տեսնելով մարեցաւ:

Թաւոր սրահակի մը մէջ է Քրիստոսի Ս. Գերեզմանը. թէպէտ արտաքուստ միացեալ յարկ մը կ'երեւի, ինչպէս կը տեսնուի պատկերէն, սակայն ի ներքուստ երկու մասի բաժնուած է երկու դռներով: Դռունէն ներս Ս. Գերեզմանի առաջին մասն է, որու կեդրոնը՝ մարմարեայ «սինաճեւ» քար մը կայ

կանգուն, որ Հրեեսակի վեմ կը կոչուի: Այս տեղը Ս. Աւետարանի Յանոսից ըսած տեղն է, ուր կանգնած էր Հրեշտակներէն մին՝ սպիտակ պատմութեան հագած:

Ս. Գերեզմանի ներքին մասը քիչ մը խոնարհ է արտաքին մասէն, որու դրան ճակատը, եւ աջ ու ձախ կողմերն, մարմարիտնի վրայ գեղեցիկ ու նուրբ քանդակներ յորինուած են: Այս մասը թէ՛ լայնութեամբ եւ թէ՛ երկայնութեամբ գրեթէ 2 մէթր է՝ Քրիստոսի բուն գերեզմանն այս մասին մէջ հիւսիսային կողմն է, ժայռին մէջ փորուած, որու կողերն ու վրան՝ սպիտակ մաքուր մարմարիտով ծածկուած է, ո՛վ ոք ներս մտնէ՝ թէ եւ բնականէն մնացած բան մը չտեսնէր, բայց մանր գննութեամբ գիտողին, դեռ կը տեսնուին, մարմարներու տակ, բուն բնական ժայռերն:


Ս. Գերեզմանի գմբէթն հաստատուած է 12 սիւներու եւ կամարներու վրայ, զոյգ զոյգ խարսխալ, սիւներուն բարձրութիւնը 10 թղաշաի է, ու գմբէթը կապարապատ եւ փայտաշէն. իսկ Ս. Յարութեան տաճարի մեծ գմբէթն կառուցած է 18 սիւներու վրայ:

Ս. Գերեզմանի արեւմտեան կողմը Խրպտիներու յատուկ մատուռ մը կայ որ Ս. Աւետարանին Սնարից կոչած տեղն է, ուր նստած էր Հրեշտակի մին եւ աւետիս տրուաւ իւզաղի կանանց բոկով, « Զէ ատտ, այլ յարեաւ »: Սոյն մատուռին դիմաց երեք հատ մութ խուցեր կան, որոնք Յովսէփ Արեմաքացի կը կոչուին: Այս խուցերէն ելլելով դէպ ի հիւսիս կ'երեւան ջրհոր եւ լուսարան, որու դռնէն դուրս, դէպ ի ձախակողմ կառուցուած է Լատինաց յանուն Մարեայ Մագքաղեմացոյ սեղանն, որու առջեւ փոքր հրապարակ մը կայ, մարմարիտէ ծածանչներով զարդարուած: Այս հրապարակ Պարտէզ կը կոչուի, Յիսուս այս տեղ երեւցաւ Մարիամ Մագթաղեմացոյն որ պարտիզպան կը կործէր: Պարտէզին հիւսիսակողմն է Լատինաց եկեղեցին: Մենք պարտէզին համար ինչ մեկութիւն որ տուինք, Լատինք սոյն եկեղեցւոյ տեղին կուտան. Յիսուս այս տեղ երեւցաւ Մագթաղեմացոյն ըսելով եւ ասոր համար եկեղեցւոյ անունը Երեման կը կոչեն: Եկեղեցւոյ դրան

ետեւը, չարչարանաց սեան մէկ մեծ կտորը կայ:

Իսկէ դէպ արեւելք եղած կամարի տակէն անցնելով Եօթն Կամարք Ս. Կուսին ըստած կամարազարդ հրապարակը կուգանք, որու հիւսիսային անկիւնն է Քրիստոսի Զորոգ բանն, որ մատուռ մըն է երեք մասերու բաժնուած:

Զորոգը բանտէն ելլելով դէպ արեւելք ձախ կողմը կառուցուած է Ս. Ղունկիանոսի



Քրիստոսի Ս. Գերեզմանը

սեղանն: Այս Ղունկիանոսն որ Փրկչին կողքնիղակով ծակեց ուրկէ բղխեց արիւն եւ ջուր, եւ սոյն ոքանչեղեաց վրայ հաւատաց Յիսուսի: Ս Ղունկիանոսի սեղանէն մի քիչ հեռի է յանուն Հանդերձից բաժանման սեղանն: Այս տեղ դահիճները իրենց մէջ բաժնեցին Յիսուսի հագած հագուստները եւ պատմութեան վրայ եւս վիճակ ձգեցին: Նոյն տեղոյ ուղղութեան վրայ դուռ մը կայ, ուսկից 29 աստիճանով Ս. Լուսաւորիչ եկեղեցին

կ'իջնուի, վերոյիշեալ սեղանն ու այս եկեղեցին մեր ազգին սեփականութիւնն է: Լուսաւորչայ եկեղեցւոյ հարաւային կողմը եղած 13 աստիճաններէ ԳիւՍ Խաչի այրը կ'իջնուի:

Յիսուսի թաղումէն յետոյ նորա չարչարանաց բոլոր գործիններն ու խաչափայտը Հրեայք հոս բերին նետեցին, եւ հետզհետէ հողով ու աւերակներով լեցուեցաւ: Ինչպէս նախապէս պատմեցինք, Կոստանդիանոսի մայրն մաքրել տալով բոլոր գործիններն եւ երեք խաչերը երեւան հանեց:

Ս. Լուսաւորչայ եկեղեցւոյ վերի դռնն դուրս աջ կողմն է Փուժ Պսակի սեղանն, որուն Ձաղանաց սիւնի սեղան եւս կ'ըսուի: Տեղւոյն միջավայրը երկաթեայ վանդակի մը մէջ պարփակուած է ձաղանաց սիւնի մէկ մասը, որ գորշագոյն կրանիթեայ սիւնի մը կտորն է:

Աւանդութեամբ կ'ըսուի թէ՝ Յիսուսի գլուխը փշեղէն պսակով պսակուած ժամանակ, այս սիւնի վրայ նստեցուցին Պիղատոսի տան մէջ, ուրկէ այս տեղ բերուեցաւ:


Փուշ պսակի սեղանէն յառաջ կը հասնինք դրան մը առջեւ, ուսկից 18 ոտք աստիճաններով վեր կ'ելլուի ի Ս. Գողգոթա, ուր շատ պայծառ ու զանազան գեղեցիկ նկարներով եւ ոսկեզօծ ու արծաթապատ պատկերներով զարդարուած եւ ամբողջ յատակը մարմարիոնով ծածկուած է:

Գողգոթայի մասուռը մասամբ ժայռին և մասամբ արհեստական կամարներու վրայ յենած է: Ընդարձակ մարդակներով իրարմէ զատուած զուգահեռական երկու մասերու կը բաժնուի, մին՝ Տեղի Խաչելութեան կոչուածն: Այս տեղն էր ուր Յիսուս խաչին վրայ գամուեցաւ, երբ խաչը դեռ գետինն էր. ասոր հարաւակողմը կը գտնուի « Եօթն Յաւոց » եկեղեցի անուանեալ աղօթավայրն որ անկէց վանդակորմով մը զատուած է: Կ'ըսուի թէ՝ երբ դահիճները Յիսուսը խա-

չին կը կապէին, Ս. Աստուածածին եւ Ս. Յովհաննէս այն տեղ կը գտնուէին:

Այս ծակին մօտ, ուր հաստատեցին խաչը, արծաթեայ տախտակի մը ներքեւ ժայռին վրայ կը նշմարուի երկայն պատուածք մը՝ որ Գողգոթայի վերէն մինչեւ ստորոտը ձգուելով՝ կ'երթայ մինչեւ Ադամայ մատուռին ստորին կողմը: Սա այն պատուածքն է որ՝ Որդւոյ Աստուծոյ վերջին շունչը աւանդած ատեն բովանդակ բնութեան կրած բուռն ցնցումէ յառաջ եկաւ: Արդարեւ Մատթէոս Աւետարանիչ կը գրէ (Գլ. Ի՛. 50-52):

« Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ի



Սուրբ Գողգոթա

ձայն մեծ, եւ աւանդեաց զհոգին:

« Եւ ահա՝ վարագոյր տաճարին ցելաւ յերկուս, ի վերուստ մինչեւ ի վայր. և երկիր շարժեցաւ եւ վէմք պատառեցան:

« Եւ գերեզմանք բացան, եւ բազումք մարմինք ննջեցելոց սրբոց յարեան: »

Արուեստակա՞ն է սոյն պատուածքն, ինչպէս կրնայ ի սկզբան կարծուիլ: Ո՛չ, կը պատասխանեն զայն ուսումնասիրող երկրագէտք: Արդարեւ ծերպի երկու կողմերն, կատարելապէս իրարու համապատասխանելով հանդերձ՝ այնպիսի զարմանալի շրջաններով իրարմէ երկբեղկուած են, որ անկարելի է արհեստական կերպով կամ ո՛ր է գործիքով յառաջ բերել: Առանց աստ ի մէջ բերելու զանազան գիտուններու վկայութիւններն, միայն կը թարգմանենք Ատոմարն

նշանաւոր դիտունին պատմած հետագայ դէպքն :

« Անգլիացի ազնուական մը ճամարտախօս ու վստահելի անձ մը, որ ամբողջ Պաղեստին ճամբորդած է, ինձ պատմեց թէ՛ իրեն ընկերը մտացի աստուածեան մը (որ Քրիստոսի աստուածութեան չի հաւատար) Սուրբ Տեղեաց մասին եղած ամէն աւանդութիւններն ու զրուցումներն կը ծաղրէր : Ահա՛ այս տրամադրութեանց մէջ գնաց այցելել ժայռի այն պատուումքն՝ որ Գողգոթայի ժայռի վրայ կ'երեւի և որու համար կ'ըսէին թէ Յիսուսի Քրիստոսի մահուան ատեն պատահած երկրաշարժէ յառաջ եկած է : Բայց բնագէտի մը ուշադրութեամբ ու ճշգրտութեամբ զայն քննելէ յետոյ իր բարեկամին ըսաւ. « Կ'սկսիմ քրիստոնէայ « Ըլլա՛ւ : Բնագիտական « Մաթեմատիքական և « Երկայն ուսումնասիրութիւն մ'ըրի, և այժմ « ապահով եմ թէ այս « պատուումքն սովորա- « կան և բնական երկրա- « շարժով մը եղած չէ : « Արդարեւ այնպիսի երկ- « րաշարժ մը կրնար այս- « պիսի ժայռի մը կող- « տը կազմող զանազան « մասերն իրարմէ բաժնել՝ բայց զանոնք ի- « բարմէ զատող երակներու հետեւելով՝ և « թոյլ կողմերէ անոնց յօդաւորումն խզելով : « Դիտած եմ թէ գետնաշարժէ ճեղքուած « բոլոր ժայռերն այսպէս ճեղքուած են, և « գիտութիւնն ալ զայս կը հաստատէ, ուս- « կայն այս տեղ. բոլորովին տարբեր բան « մը կը դիտեմ. ժայռը լայնքին պատուում « է և բացած ճեղքը խաչաձեւ կը կտրէ « խաւերուն երակները : Ակն յայտնի՛ կը « տեսնեմ որ ասիկա՛ մէկ գերագոյն պատ- « ճառէ՛ մը յառաջ եկած է, որովհետեւ ո՛չ « արհեստն և ո՛չ բնութիւնն կրնան կատա- « ռել այս գործը : Ահա՛ ասոր համար փառք « կուտամ Աստուծոյ որ զիս աստ առաջնոր- « դելով՝ շնորհեց տեսնել իր հրաշալի զօ- « րութիւնն հաստատող այս չէնքը, չէնք՝

« որով աչացս առջեւ լուսացնցող կը փայլի « Յիսուսի Քրիստոսի Աստուածութիւնն » :

Ս. Գերեզմանի դրան դիմացն եւ Ս. Յարութեան Տաճարի գրեթէ կեդրոնն է Յունաց մեծ եկեղեցին, որու ներսի կողմը համակ ոսկեզօծ եւ հարուստ զարդարանք մը ունի, և Ս. Յարութեան Տաճարի մէջ եղած միւս եկեղեցիներէ աւելի պայծառ ու ընդարձակ է : Սոյն եկեղեցւոյն մէջտեղ կէս կանգուն բարձրութեամբ քար մը կայ, որու համար Յոյները կ'ըսեն թէ՛ այդ տեղը աշխարհիս կեդրոնն է :

Ս. Յարութեան աշխարհամատրան Տա-



Գերեզմանի պարտեզ

ճարին մէջ գտնուած նուիրական եւ երկըրպառելի նշանաւոր տեղերն համառօտակի նկարագրելէ յետոյ՝ ինչպէս կարող ենք նըկարագրել այն այլազան մտածումներն որոնք միտքդ կը խնդրեն եւ զգացումներն՝ որոնք սիրտդ կ'ողողեն, երբ սոյն տաճարի մէջ պտըտելով՝ միտքդ բերես անդ պատահած մեծամեծ դէպքերու յիշատակն, մանաւանդ եթէ հոն գիշերես. այդ պահուն, արդարեւ, ամայի տաճարներուն մէջ տիրող խորին լռութիւնն եւ չէնքը քողարկող մեծամեծ ստուերներն, որոնք իւրաքանչիւր աղօթավայրի առջեւ պլպլացող մշտալոյս կանթեղներով միայն, փոքր ինչ կը փառատին, հոգին կը վերացնեն և համակ կը թաղեն զայն, լռին զննութեան մը մէջ՝ զոր ոչինչ կը խռովէ : Յայնժամ երե-

ւակայութիւնդ կը սուգի այն խոկուն մտա-
խոհութիւններէ միայն մէջ, որոնց հզօր հը-
րապոյրն միայն կրողը կրնայ հասկնալ: Անդ
ժամերը կ'անցնին առանց հետք մը կամ
տաղտուկ մը ձգելու, եւ անցեալն՝ իր ա-
մենէն վսեմ ու յուզիչ խորհուրդներով, զոգ-
ցեա կենդանի կը պատկերանայ աշացդ: Ի
Գողգոթա, կարծես ականատես ես Յիսուսի
Զարչարանաց սրտակեղէք դէպքերուն:
Կը լսես որ կը հնչէ սա գերազոյն ազա-
ղակն, ամենայն ինչ կ'աւսաբեալ ե: Խաչին
ստորոտը կը տեսնես Ս. Կոյսն եւ սիրելի ա-
չակերտն: Այս ամենուն վրայ կը ճառա-
գայթէ Յիսուսի անբաղդատելի դէմքն, Յի-



Խաչի ճանապարհ

սուսի, որ պիտի մեռնի եւ իր մահուամբ ա-
զատէ յանցաւոր մարդկութիւնն:

Այժմ՝ եթէ Գողգոթաէ իջնելով՝ յառա-
ջանք դէպ ի Ս. Գերեզմանն, եւ երբ
մտնենք վէժ՝ Հրեշտակի մատուռն, ահա՛ ե-
րեւակայութեանդ առջեւ կը պատկերանայ
երկնային սուրհա՛ դուին՝ նստած այն թաւա-
լած քարի վրայ, որ գերեզմանի կափարիչն
է. ահա՛ բարեպաշտ կանայք, որոնք Փրկչի
մարմինն օծելու եկած են, բայց գերեզմանը

պարապ է, ու մահը չէ կրցած ընդ երկար
պահել իր Աստուածային հիւրն. քանզի յաղ-
թած է մահու, եւ սոյն բաց գերեզմանի վը-
րայ՝ ուրկից աշխարհի համար կեանք եւ
փրկութիւն ելաւ, արդէն քսան դարեր ա-
ղօթած են եւ ապագայ դարերն եւս յաւէտ
պիտի աղօթեն՝ որքա՛ն արտասուք, քանի՛
հառաջանք, որպիսի՞ ջերմ աղերսներ եւ
քանի՞օ՛ն պաշտամունք թուած են ազգերէ
ու շրթներէ ամէն ազգի այն անթիւ ուխ-
տաւորներու, որոնք՝ երկրպագութեան ե-
կած են սոյն փոքր Սրբավայրն. յորում Որ-
դի Մարդոյ ննջած է երեք օր՝ խորհրդաւոր
մի քնով, իր փառաց ու մեծավայելուչ յաղ-
թանակի մէջ վարթներէ յառաջ: Ա-
նոնցմէ յետոյ՝ երբ ճակատդ ու շըրթ-
ներդ վրօշմես այսպիսի մի Գերեզման
ծածկող մարմարիտի վրայ, կը հաա-
կնաս թէ՛ ինչո՛ւ ամէն քրիստոնեայ
պիտիք այնքան մեծ կարեւորութիւն
տուած են անոր, կը համոզուիս թէ
մեր ազգն ալ, ափէն ջանք ընելով՝
սրբաբնի սրահել ու պահպանել այդ Ս.
Տաճարին մէջ ունեցած իր դարաւոր
իրաւունքներն, պահպանել այդ քա-
ղաքի մէջ ստացած կարեւոր դիրքն,
Օսմանեան մեծագօր ու բարեյիշատակ
Սուլթաններուն եւ մանաւանդ մեր
վեհապետ Սուլթան Ապտ-իւլ-Հա-
միտ Բ. Կոյսեր շնորհած արտօնու-
թիւններով:



ՄԱՆՈՒՆԵՐՈՒ ԽՐԱՏԱԿԱՆ

Սա խոսն ի յուս բարձունք ո՞վ է, զիտե՞ս, ո՞վ տղայ,
Այն Յիսուսն է որ խաչուեցաւ ի Գողգոթա.
Հոն Խաչից Նա անպարտ արիւնն որ մեզ յաւէտ
Անանց կեանքին վայել տայ փառքն երանաւէտ.
Կորուստ անվերջ էր մեր բաժին եթի Փրկին
Խաչ՝ փրկութեան չ'ըլլար միջոց մեզ Թանկագին:
Առնունք ուրեմն մենք ալ մեր խաչ սիրով մեր յուս,
Նոյն հեղուկեամբ, զոր պատուիրեց Տէր մեր Յիսուս,
ձամբան՝ զոր նա բացաւ մեզի, նեղ է Թէեւ,
Երջանկութեան սակայն տանի յարկն անդեղեւ.
Ասկէ ուրիշ ուղիներ՝ ո՛չ ելք, չ'ա՛հ չուսին,
Նոյն իսկ Թէ որ ըլլան հարթ, լայն, շքեղ, դիւրին:

ՀԱՃՈՅՔԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

(ՈՒՍԱՆՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԷՍ)

✠✠✠✠✠✠✠✠



Լղեղս չափազանց յոգնեցուցած էի և սաստիկ հիւանդութեամբ մը կը տառապէի. պարապ տեղը բըժիշկս հրամայեց որ՝ ժամանակի մը համար զբաղուամեք ձգեմ և երկրին մէջ պտոյտ մը կատարեմ: Առողջութեան պէտք ունէի բայց անոր համար պէտք եղած զոհողութիւնն ընելու կը դժկամակէի:

Օր մը հաշիւներու երկար շարք մը քըննելէ ձանձրացած, յոգնած, վրաս նեղիչ քուն մը եկաւ: Ինծի այնպէս մը երեւցաւ որ, շուտով արթնցայ և բաց օդին մէջ քիչ մը կազդուրուելու համար գործս ձգեցի և պտտել ելայ: Երկար ժամանակ թափառեցայ աստ անդ, մինչև որ ուշադրութիւնս գրաւեց Նախախնամութեան փողոցին համեստ տուներէն մին, որու ճակատը կախուած տախտակին վրայ գրուած էր.

«Անոնք որ կը փափաքին ո եւ է բան մը քսանալ, բող հոս դիմեն»:

Աճապարանքով ներս մտայ դռնէն և ինքզինքս գտայ մեծ սենեակի մը մէջ, որուն մէկ կողմը ամպիոնի պէս տեղ մը կար և ամպիոնին առաջ սեղան մը:

Սեղանին առջեւ նստած էր սեւուկ, գիրուկ, ծեր մարդ մը. երբ հարցուցի թէ ո՞վ էր. ըսին թէ նոյն ինքն պարոն Ճակատագիրն է:

Սենեակը լեցուած էր իրենց փափաքներն պարոն Ճակատագիրն ներկայացնելու համար եկող անձինքներով. երբ իրեն երթային փափաքին յայտնելու, ծեր պարոնը միշտ հետեւեալ խօսքերը կը կրկնէր:

— Իմ սկզբունքս սա է. ամէն անոնք որ բան մը առնել կ'ուզեն, պէտք է որ անոր հաւասար բան մը տան:

Ամէն ոք հաւանած կը թուէր սոյն ա-

աջարկին, բայց քիչեր հասկցած էին ատոր նշանակութիւնը:

Առաջին մարդն որ յառաջացաւ, կաղ մըն էր. սոյն անձը ձանձրացած կ'երեւէր նեցուկով ու գաւազանով քալելէ. կը խնդրէր որ իր կաղութենէն ազատի և ինքն ալ ուրիշ մարդոց պէս շիտակ քալէ:

— Շատ լաւ, ըսաւ Պ. Ճակատագիրն, կ'ուզե՞ս քու աչացդ տեսութիւնն տալ փոխարէն:

— Երբէ՞ք, ըսաւ կաղը, իմ մէկ պակասութիւնէս բռնուելու համար չեմ ուզեր իմ զգայարանքներու թանկագինը կորսնցնել. անոնք իմ հոգւոյս կը վերաբերին, իսկ ոտքս՝ մարմնոյս:

Ըստ երեւոյթին կաղն ոչ իր տեսութենէն և ոչ ալ ուրիշ անդամէ մը զրկուիլ կուզէր. ուստի Պ. Ճակատագիրն խրատեց զինքն որ, փոխանակ ուրիշ պակասութիւններ ալ աւելցնելու, ունեցածովը գոհ ըլլայ:

— Բայց միայն քալել կ'ուզեմ, կակաղեց կաղը:

— Լաւ, սակայն հաշմանդամութենէդ զատ բան մը զոհել չես ուզեր, այդպէս կ'ըլլա՞յ մի: Եթէ աղէկ բանի մը տիրանալ կ'ուզես, պարտիս քու միշտ ունեցած մէկ բանդ զոհել: Այս է բոլոր առեւտրական գործողութեանց սկզբունքն. այնպէս չէ՞: Կը ցաւիմ, պարոն, որ ձեզ ծառայելու պատիւը չպիտի ունենամ:

— Շատ լաւ, պարոն Ճակատագիր, չեմ ուզեր ձեր գործերուն արգելք ըլլալ, ըսելով՝ կաղն իր գաւազանն առաւ և սայթաքելով սենեկէն դուրս գլորեցաւ: Գացած ատեն քթին տակէն կը մրմռար թէ՝ « Խնչ անմտութիւն պիտի ըլլար արդէն ունեցած պակասութեանս վրայ ուրիշ մ'ալ աւելցընել »:

Ասկէ ետքը եկաւ կին մը որ 16 տարեկան տղու մը ձեռքէն բռնած էր և կ'արտասուէր՝ կաթոգին նայուածք մը ձգելով իր սրտի հատորին վրայ: Այս տղան դեփ դեղին եղած և ջերմէն մեռնելու աստիճանը հասած էր: Տիկինն իր որդւոյն առողջութիւնը կը հայցէր:

— Տիկին, ըսաւ Պ. Ճակատագիրը, ձեր խնդրածը մեծ բան մ'է, ուստի փոխարէն տալու էք մեծ բան մը. նոյն իսկ քու կեան-

ըդ տալու պատրաստ ես :

— Ո՛հ, տէր իմ, տա՛նն անգամ, քսա՛ն անգամ զոհելու պատրաստ եմ ինքզինքս, միայն թէ Լեւոնս առողջանայ, ըսաւ հեկեկալով կինը :

— Բայց, տիկին, զուք քսան կեանք չունիք տալու. միայն մէկ հատ ունիք, կըրնա՞ք տալ :

— Այո՛, տէր իմ. պատրաստ եմ ադկէ աւելին ալ ընել՝ եթէ կրնամ, ըսաւ կինն, հետզհետէ զգաստանալով Հարցուկին հանդարտ և սառն երեւոյթէն :

— Շատ լաւ, այդպէս թող լինի, ըսաւ հարցուկը, տուն գնա և քու աղերսդ պիտի տրուի նոյն խոսքու կենացդ գնովն :

Տեսայ որ, մայրն ելաւ, գուրգուրալով Լեւոնը իր կուրծքին վրայ սեղմեց և հանդարտ ուրախ դէմքով գնաց. իր ուրախութիւնն կը նմանէր լուսնի լուսին, երբ երկինք մթադնի միգապատ ամպերով, լուսինն յանկարծ կ'երնէ և իր լոյսով հալածական կ'ընէ ամպերը :

Երրորդ այցելուն է տապանդի, կրթութեան և ազնուութեան տէր աղքատ պառոն մը :

— Տէ՛ր, ըսաւ, ունի՞մ եօթը մանչ և մէկ աղջիկ զաւակ, և զանոնք կրթելու համար պէտք եղած միջոցներէ զուրկ եմ :

— Զիշդ հակառակն այն պարոնին, որ այս առտու եկաւ իրեն զաւակներ խնդրելու, ըսաւ Պ. Ճակատագիրը. ի՞նչ մեծ դժբաղդութիւն որ չէք կրնար սակարկութիւն մ'ընել : Ըսէ՛ք ինձ, տէր, ի՞նչպէս պիտի կըրնամ ձեզ ծառայելու հաճոյքն ունենալ :

— Իմ ուզածս միայն ստակ է և ոչ այլ ինչ, Պ. Ճակատագիրը խնդրեց որ իր առողջութիւնն տայ փոխարէն. բայց պարոնն պատասխանեց թէ՝ « ինք այդ տպրանքէն շատ բան մը չունէր, և հետեւաբար չէր կրնար բան մը գեղջել » :

— Բայց մեր սկզբընքն... կրնա՞ս տաղանդիդ փոքր մէկ մասը զոհել, ըսաւ Ճակատագիրն :

Պարոնն բարկացաւ և բողբոջեց թէ ի՞նչ կերպով կրնար զրկուիլ իր տաղանդէն եւ խենդ մը դառնալ և թէ այնուհետեւ կրնա՞ր օգտակար լինիլ իր ընտանեաց :

— Դուք ութ զաւակներ ունիս, և մարդիկ կան որ երկուքով, չորսով և շատ ան-

գամ ալ մեկով գոհ կ'ըլլան. այդ զաւակներէդ մին տուր, կրնա՞ս քու երիցագոյն զաւակէդ զատուիլ :

— Անկարելի՛ է, Օհաննէ՛ս, այսօր ճիշդ տասն եւ մէկը մտաւ, արտասովար կարողութեան տէր եւ փայլուն ապագայի մը յուսով թաթաղուն պատանի մ'է, իր ձեռքը գիրքերով դպրոց կ'երթայ եւ միայն իր գործը գիտէ, ուրիշ բանի ուշադրութիւն չընէր :

— Է՛հ, երկրորդէն աւելի դիւրին կըրնաս զատուիլ :

— Ո՛հ, ո՛հ, երկրորդն րնա՛ւ չըլլար. երկրորդն եւ երրորդն երկու երկրորեակներ են, եւ զանոնք իրարմէ զատելը ստուգիւ զանոնք մահուան դատապարտել ըսել է, կը նմանին մէկ ծղոտի վրայ բուսած երկու կեռասներու : Այս երկուքէն ալ չեմ կըրնար զատուիլ :

— Սա չորրորդին ալ ըսելիք մը ունի՞ս :

— Դեռ ութը տարեկան, թարմ եւ գեղեցիկ զաւակ մը, ճիշդ իր մօրը նման եւ հրեշտակի մը պէս հեղ ոգ շնորհալից է : Երբոր երեկոյին տուն դառնամ, կը դիմաւորէ զիս հեռուէն եւ վիզս կը պլլուի « Հայրի՛կ, հայրի՛կ » ըսելով : Զայն զոհելու համար անխիղճ գազան մ'ըլլալու եմ, Պ. Ճակատագիր :

— Քեզ նեղել չեմ ուզեր, բայց դուն աղջիկ մ'ունիս, անիկա տուր : Կանայք շատ անգամ անօգուտ եւ ձանձրալի են եւ զանոնք ապրեցնելն մեծ դժուարութեանց եւ զոհողութեանց տեղի կուտայ :

— Անօգուտ մի, ի՞նչպէս բերաննիդ յառաջ կ'երթայ, պարոն, իմ Մարիամս անօգուտ անուանելու, թէեւ դեռ վեց տարեկան, բայց տեսնելու էք ի՞նչպէս կ'օգնէ իր մօրը : Ամէն բանին տեղը գիտէ ու դեռ մօրը բերանը չբացուած՝ գիտէ թէ ի՞նչ կ'ուզէ : Իրմէ մեծ աւելով՝ սենեակը կ'աւլէ, հաւքըտուք կ'ընէ : Հոս հոն կը վազէ, գործ մը կը տեսնայ որ, տեսնե՛ս : Երբ տանը մէջ մէկը հիւանդանայ, ի՞նչ աշխուժիւ եւ խնամով կը նայի, կը խնամէ եւ կը դարմանէ : Եւ ո՛րչափ ալ ազնուասիրտ է, գիտե՞ս, իր ժպտուն դէմքն կեանք տալու բաւական է, եթէ անգամ մը երեսդ նայի, եւ պզտիկներս ալ ո՛րքան կը սիրեն զայն :

— Վա՛յ, պզտիկ մը, պէսէ՛ք մը, ա՛,

պէսպէք ալ կայ եղեր հա՞, այդ պէսպէքը տուր ուրեմն :

— Ինչպէ՞ս, պէսպէքը տա՞մ, կը հաւատա՞ս որ կուտամ. թէեւ կուտայ եւ մինչեւ առտու անքուն կը թողու, սակայն կինս զայն ամենէն աւելի կը սիրէ, անոր համար հոգի կուտայ, անոր ամենափոքր հիւանդութիւնն անգամ զինքը դժբաղդ կ'ընէ. եթէ պէսպէքը մեռնի, մայրն ալ հետը կը մեռնի :

— Բայց ատկէ զատ երկու հատ եւս կայ, հարկաւ ատոնցմէ մին կուտաս :

— Ո՛չ, ո՛չ, բերանդ մի՛ առնէր. սիրելի՛ զաւակներս. մեծը դեռ նոր կը խօսի եւ առաջին բառն էր « հայրիկ », միւսը՝ խեղճ Յակոբ՝ քիչ մը հիւանդուտ է, միշտ իր մօրը մատերուն ծայրը բռնելով կը քալէ, երբեմն ես ալ զինքը գիրկս կ'առնում եւ կը պտըտցնեմ. վիզս կը պլուրի, այնչա՛փ կ'ուրախանայ, այնչա՛փ որ, ուրախութենէս լալ կ'սկսիմ. հետզհետէ կը զօրանայ ու կը մեծնայ. ա՛հ, այն ատեն որչա՛փ երջանիկ պիտի ըլլամ, այս ըսելով՝ պարոնն արտասուաց մեծ կաթիլ մը սրբեց :

— Յիրաւի՛, ըսաւ Ճակատագիրը, դուն շատ երջանիկ ընտանիք մը ունիս, թէ եւ աղքատ ես, տղաքդ քեզի մեծ մխիթարութիւններ են, եւ այնչափ կը գնահատես քու երջանկութիւնդ որ, եւ ո՛չ մէկ հարստութեան հետ փոխել չես ուզեր :

— Բայց ես հարուստ ըլլալ կ'ուզեմ, ըսաւ Պարոնը. ուրիշները հարուստ են, իմ դրացիս Հաճի Կարապետը տասներկու տղայ ունի եւ շատ ալ հարուստ է :

— Կ'ուզե՞ս քու ունեցածներդ անոր հետ փոխանակել :

— Ո՛չ երբեք :

— Ինչո՞ւ :

— Շատ լաւագոյն պատճառներով. գործիւնակ, անոր տղաքներն իմիներէս շատ ստորին են : Անոր տղաքներն իմ զաւակներու հետ բաղդատել ոճիր է. զանոնք չեմ կրնար բնաւ իմիններուս պէս սիրել. ես Հաճի Կարապետին տեղն ըլլալ կ'ուզեմ եւ ո՛չ թէ ինքը :

— Լա՛ւ, ըսաւ Հարցուկը, կը տեսնեմ որ դու ալ այլոց պէս ես, կ'ուզես որ ունեցածդ պահես եւ անոր վրայ ուրիշներ ալ ունենաս, բայց ասի իրաւունք չէ, դուն

քանի մը բաներ պիտի ունենաս, այլ ո՛չ թէ աւելի բաներ :

— Ուրեմն պէտք է կրեմ իմ դժնդակ բաղդս. կը տեսնեմ որ դոնէ օգուտ չկայ, մանաւանդ թէ հիմա կը տեսնեմ որ կարծածիս չափ դժբաղդ չեմ եղեր : Մնայք բարեաւ Պ. Ճակատագիր :

— Երթաք բարեաւ, տէր Գրագէտ :

(Իմ սենեակէս)

Վ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆ



ՄԻՐՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ

(ԶԱՏԻԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Սէվիլի՝ Թրիանա փողոցին մէջ կար 15 տարեկան տղայ մը, Ճուանիթօ էլ Մօրէնիթօ : Հօրէ ու մօրէ որք՝ ինքնիրեն բուսած խոտի մը պէս կը մեծնար Թրիանայի սալաշատակին վրայ, փողոցը կամ ակոսի մը անկիւնը քնանալով, քիչ մը պտուղով փորը կշտացնելով եւ ապրելու համար հարիւր արուեստ ի գործ դնելով, որոնց ամէնէն շահաբերը թատրոններուն դուռը՝ բողբոջած ծախելն էր : Մաշած ու ծուրի ծուրի եղած հագուստներուն չնայելով՝ գեղեցիկ մանչ մըն էր ան՝ ժպտուն շրթներով, բոցավառ աչքերով, գանգուր մազերով ու թուրի դէմքով : Երակներուն մէջ գնչուի արիւն կար, եւ բոլոր Սպանիացիներու պէս թափառիկ կեանքի սիրահար՝ ցլամարտի համար հոգի կուտար :

Աւագ Ուրբաթ առտու տխուր արթնցած էր : Աւագ շարթուն բոլոր թատրոնները գոց ըլլալուն՝ չէր կրցած սովորական արհեստն ի գործ դնել, եւ գրպանը ստակ մը չկար : Ամէնէն շատ սրտին դպածը սա էր թէ Զատիկին օրը Մայանդինի եւ Ֆրատքինլօ ցլամարտ մը պիտի տային, եւ իրեն աղքատութիւնը պիտի զրկէր ինքը, ամէնէն շատ սիրած մէկ տեսարանին ներկայ ըլլալէ : Միտքը դրաւ անգամ մը առդին անդին գործ մը փնտռել եւ Ս. Կոյսին ջերմէնանդ աղօթք մը ընելէ ետքը՝ մազերուն մէջ մնացած յարդի շիւղերը թոթուելով՝ ակոսէն դուրս ելաւ :

* *

Առաւօտը սքանչելի էր: Գոց կապոյտ երկինքի մը վրայ կը ցցուէր Տէլա Ժիրալտայի վարդերանդ աշտարակը: Զատիկի առթիւ Սէվիլ եկած գիւղացիներու խումբերը փողոցները կը լեցնէր: Թօրօսի հրապարակէն անցած Ժամանակ՝ ցլամարտի կրկէսին մէջ տեղ մը վարձելու համար առաջուրնէ գլխաւոր սենեակները խոնուող բազմութիւնը տեսնելով սիրտը աւելի կոտրեցաւ: Չորս Ժամ փողոցները չափփեց՝ կարկանդակներու եւ անուշեղէններու հոտը առնելով ու սրճարաններուն առջեւ պտտող ցլամարտիկներուն ետեւէն երթալով:

Միտքը կը չարչրկէր քանի մը բեզեքա չահելու պատուաւոր միջոց մը գտնելու համար. պարապ տեղը կրօնական թափօրներու բօկրամներ ծախելու ետեւէ եղաւ. արդէն բոլոր տեղերը գրաւուած էին: Վերջապէս ճարահատ, փորը անօթի, արեւէն այրած՝ հասաւ Օտրիանսիի դռներէն մէկուն առջեւ, ուրկէ պիտի անցնէր Գօնֆրանտիսի թափօրը:

Հոս Մօրէնիթօ, երկնցաւ մարմարէ ատիճաններէն մէկուն վրայ, եւ աղուոր մը քնացաւ: Սիրուն, շատ սիրուն պատկեր մը կը կազմէր այս քնացող թափառաշրջիկը, սպիտակ մարմարիոնին վրայ՝ մէկ բազուկը գանգրահեր գլխուն տակ անցուցած՝ երկար թարթիչներով կոպերը գոցած, եւ ծիծաղկոտ շրթները կէս մը բանալով ձեպձերմակ ակռաները կէս մը դուրս հանած:

Մինչդեռ ինք կը քնանար, չրջագայող զոյգ մը հոնկէ անցաւ. երկու երիտասարդներ, կին ու ամուսին գուցէ, սիրահարի զոյգ մը վերջապէս:

— Տեսէք սա՛ արարածը ի՞նչ սիրուն է, ըսաւ մարդը կնիկանը, քնացող աղեկը դիտելու համար կանգ առնելով. ի՞նչ ալ աղուոր դիրք մը առեր է, կարծես թէ ձեռքը սրտագին շարժումով մը բացուած է ողորմութիւն ուզելու համար:

— Եկու՛ւր աղուոր անակնկալ մը ընենք իրեն, պատասխանեց կինը, ձեռքին մէջը արծաթ դրամ մը ձգենք, ի՞նչպէս պիտի զարմանայ արդեօք արթնցած Ժամանակ:

Սիրողները առատաձեռն կ'ըլլան: Երկտասարդը գրպանէն 25 դահեկան արծող արծաթ դրամ մը հանեց եւ կամաց մը քրնացողին ձեռքին մէջ դրաւ ուր պաղ մետա-

ղին հպումովը ինքնաբերաբար գոցուեցաւ: Յետոյ զոյգը հեռացաւ խնդալով:

* * *

Մօրէնիթօ տակաւին կը քնանար եւ կ'երազէր: Երազին մէջ կը տեսնէր որ, Սուրբ Կոյսը ծիրանի գօտիի գոյնով սանդուղէ մը վար իջնելով իրեն կուգար: Մազերուն մէջ շուշանի պսակ մը կար, եւ ձեռքերուն մէջ ձերմակ վարդեր բռնած էր: Մեղրի պէս անուշ ձայնով մը ըսաւ տղուն.

— Ճուանիթօ, բնաւ չմոռցար առտու իրիկուն ինծի աղօթելը... ի պատիւ Զաւկիսյարութեան քեզ պիտի վարձատրեմ... Կիրակի ցլամարտի պիտի երթաս:

Եւ Աստուածամայրը Մօրէնիթօի ձեռքին մէջ թօթուեց բռնած ձերմակ վարդերը, ու ամէն մէկ թերթիկ իյնալով՝ արծաթ դրամի փոխուեցաւ: Մօրինէթօ այնչափ ուրախութիւն զգաց որ արթնցաւ: Յօրանջեց ու... հրաշք, արծաթ դրամ մը ձեռքէն գլորելով աստիճանին վրայ ինկաւ հնչուն ձայնով մը: Ոչ տեսածին կը հաւատար, ոչ լսածին: Դրա՛ր առաւ գետնէն: Հինգ Բէզէթանոց մըն էր. ըսել է Աստուածամայրը զինքը չէր ծաղրած եւ պիտի կրնար ցլամարտի երթալ:

Ակնթարթի մէջ շտկուեցաւ ու սկսաւ Թօրօսի հրապարակը վազել:

Սան Բապլօ փողոցը դառնալուն քիչ մընաց պզտիկ աղջկան մը զարնուէր. ան ալ Թրիանա փողոցէն էր, Շաթա անունով, ու Մօրէնիթօ շատ լաւ կը ճանչնար անոր մայրը, պզտիկը դեղնած էր ու սեւուկ աչքերը արցունքով լեցուն:

— Ի՞նչ ունիս Շաթա, հարցուց տղան:

— Մայրիկը հիւանդ է, երկու գիշեր է չեմ քնացեր... այս առտու թփռելը դեղագիր տուաւ, բայց դեղագործը ապառիկ պատրաստել չուկեր կոր... ի՞նչ ընեմ: Եթէ մայրիկը մեռնի, ես ալ ետեւէն կ'երթամ:

Մօրէնիթօ վայրկեան մը մտախոհ մնաց, աչքերը Շաթաի սեւ աչքերուն յառած, յետոյ շուտ մը, հրաշալի դրամը առնելով պզտիկ բարեկամին ձեռքը դրաւ:

— Ա՛ռ, անուշիկս, ա՛ռ այս դրամը, Ս. Կոյսը տուաւ ինծի:

Շաթա այնքան յուզուած էր որ շնորհակալ անգամ չեղաւ եւ առանց ետին նայելու վազեց դեղարան դնաց...:

ԼՈՒԾՈՒՄ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒ

* * *

Թէ եւ Մօրէնիթօ ցլամարտին չկրցաւ երթալ, բայց սովորականէն զուարթ Զատիկի կիրակի մը անցուց: Այդ օրը Շաթաի մայրը քիչ մը աղէկցեր էր եւ պզտիկը եկեր էր Ճուանիթօի շնորհակալ ըլլալու. ուրուն արդուզարդ մը ըրած էր եւ Մօրէնիթօյի տուած դրամէն քիչ մը աւելցնելով՝ երկու կարմիր վարդ գնած ու սեւ մազերուն մէջ անցուցած էր: Երկուքն միասին գային հոռատալքիվիրի եզերքները պտտելու:

Գարունը չգիտեմ ի՞նչ բոյ մը դրած էր Շաթաի աչքերուն մէջ. երբ մացառներուն ետեւ ծածկուած մէկ անկիւնը հկան, այդ տիկ աղջիկը Մօրէնիթօի վիզը նետուեցաւ և զայն համբուրելով ըսաւ.

— Թե fouskso, fouskso. (կը սիրեմքեզ, ընկերս):

ԱՆՏՐԷ ԹԵՕՐԻԷ

Ֆրանս. Ակադեմիայէն



ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Վէզիր Քէօփրիւ. — Յ. Ա. Դ. էֆ. — Ստացանք, պակաս թիւը դրկուեցաւ: Վերջին տարւոյ Բուրաստանը 19 թիւ հրատարակուած է:

Այնթապ. — Ս. էֆ. Բ. — 1-17 թիւերը դրկուեցան, Ատանա. — Յ. էֆ. Տ. Պ. — ձեր խնդրած կրօնագիտութիւնը դրկուեցաւ, Գինն է 24 լըշ:

Քասթէմուռի. Մ. էֆ. Տ. — Ձեր յաճախարարութիւնը կատարելով՝ զրկեցինք զինն է՝ 16 լըշ:

Սեբաստիա. — Մ. էֆ. Ի. — Ստացանք. — Յանձնարարութիւննիդ դրկուեցաւ:


Մարշ. — Ն. Քհ. Ե. — 1-13 թիւերը դրկուեցաւ: Ձեր գիրքը պատրաստ է չգործուելուն մի քիչ եւս սպասել հարկ է:

Շապին Գարահիսար. — Դ. էֆ. Պ. — Ստացանք, Ձեր խնդրած զրքերուն մին « Խորհրդաւոշ Աղջիկը » զրքի ծեփով հրատարակուած չէ, իսկ միւս երկուքը հոս չի գտնուելուն՝ քիչ մը ուշացաւ: Քիչ օրէն կ'ըստանաք:

Տարէնուէ. — Մ. էֆ. Թ. — Տրդ թիւէն սկսեալ զրկեցինք. — Ստացանք եւ վճարեցինք:

Ամասիա. — Հ. էֆ. Ի. — Ստացանք եւ վճարեցինք:

Չմկածաք. — Պարոնեան էֆ. — Ապրիլ 1էն սկսեալ թերթերը դրկեցինք: Ձեր զրկած բաժնեգիրը Ս. էֆ. Դ. ի չէ վճարուած որ նա ալ մեզ վճարէ:



27.

ա մ ա
ա ր մ աւ
ն ի մ է ն
մ ա ր մ ա ր ա
ա ր ա մ ա զ դ
ա ն ը մ ա ր ք ա
ն ի կ ո մ ի դ ի ա
ու ը մ ի ա յ
ա դ ա մ ա ն դ
ք ա մ ա կ
ն ա մ ի զ
խ մ ի

Լուծեցին՝ Պարոնայր Վահրամ Գարագաշեան, Գ. Միհրդատեան՝ աշակ. Սամաթիոյ Ս. Սահակեան վարժ. Ա. Տէօվլէթեան, Յարութիւն Նիկողոսեան, Գալուստ Կիւլպէնկեան, Երուանդ Իփէքճեան, Գէորգ Գուլեան, Յարութիւն Աւագեան, Նշան Ֆէրհատեան, Արմենակ Յովակիմեան, Յակոբ Յ. Կիւհէրեան, Նիկողոս Գ. Նիկողոսեան, Հրսնտ Յ. Ասմուէրեան, Վահան Յ. Յակոբեան՝ ուսանողը Ամասիայի Իբրանոսեան վարժարանի Տ Տիւլմէճեան:

23.

Վ.Է.Դ. = Վ. — Է.Դ.

Լուծեցին Ամասիայի Իբրանոսեան վարժարանի աշակերտներէն՝ 27րդ հանելուկը լուծողներու մէջ յիշուած Պարոնայր:

29. ՀԱՐՅՈՒՄ. — Ինչպէ՞ս կ'ըլլայ որ լեցուն շիշ մը զինին հաւասար կ'ըլլայ պարապ շիշ մը զինի:

ԼՈՒԾՈՒՄ. — Երբ շիշի մը մինչեւ կէսը զինի լեցուած է կրնաք երկու կ'ըրպով հասկցնել ատիկա, կամ « Կէս պարապ շիշ զինի » կ'ըսենք եւ կ'ամ « Կէս լեցուն շիշ զինի » քանի որ երկու խօսքերն ալ մի եւ նոյն բանը ըսել կ'ուզեն. ուրեմն կրնանք գրել:

$\frac{1}{2}$ լեցուն էիս գինի = $\frac{1}{2}$ պարապ էիս գինի

Ասիկա հաւասարութիւն մըն է եւ երկու կողմերը շուրջ բազմապատկենք, դարձեալ երկու կողմերը հաւասար կը մնան, որով կ'ընենք

1 լեցուն էիս գինի = 1 պարապ էիս գինի

Մօտ ի մօտոյ լուծած էին Գալուստ Գ. Կիւլպէնկեան եւ Արմենակ Թ. Տէօվլէթեան (Իբրանոսեան վարժ) ու Վահրամ Գարագաշեան (Սամաթիոյ Սահակեան վարժարանէն):

26րդ հանելուկի լուծումը ուշ հասած է մեզ:

Կա՛ղ է առաջին վանկն հանելուկին,
Ածական մը՝ զոր կատեն աւր ու կին,
Երկրորդ վանկն է Այբ, որով կը բացուի՝
Ածականներու եղիմ գեղաչուի:

Կ'ուզէ՞ք, տամ ձեզի զո՞ք մը օրինակ,
— Կապոյտ՝ կապուտակ, սիրուն սիրունակ: —

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը հրատարակուի ամեն ամսոյ 1ին, 10ին եւ 20ին					
Կ. ՊՈԼՄՈՅ ՀԱՄԱՐ		ՀԱՍՑԷ		ԳԱԽԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	40 դահեկան	ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ		Տարեկանը	45 դահեկան
Վեցամսեան	20 »			Վեցամսեան	25 »
Եռամսեան	10 »	Կ. ՊՈԼԻՍ		Եռամսեան	12 1/2 »
ՌՈՒՍԻՈՅ ՀԱՄԱՐ		ՊԱՊ ԱԼԻ ՃԱՏՏԷՍԻ		ՕՏԱՐ ԵՐԳԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	4 բուպի	ԹԻԼ 38		Տարեկանը	10 շրանք

Ձեռքէ կը ծախուի հաւոր 40 փարսյ

Երկրորդ վանկն է մար. չա'ի մը հին, շա'տ հին.
Որ կը կնդրէ աչերն ազահին.
Այս երեք վանկէն կ'ելլէ՝ կաղամար,
Անհրաժեշտ՝ պզտիկ տղու մը համար,
Տրղա՛ք, կարդացէ՛ք միշտ Հանրագիտակ,
Հոն շատ կան ասանկ խաղեր խորատակ.
Տարեկանտ

ՄԿՐՏԻՉ Ա. ԹՈՒՐԵԱՆ



ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ


30.

1
2 . ա .
.
.
.
3 u . . . u . . . u
.
.
.
4 . r .

Կէտերուն տեղ գիրեր դնելով՝ մէջտեղի գիրերով պիտի կազմուի 1. Նշանաւոր աշխարհակալի մը անունը. 2. Չաստուածի մը անունը. 3. Եզրպտացի տիրապետ մը. 4. Բայի մը հրամայականը

ԱՆՈՏ 3. ՊԱՉՊԱՉԵԱՆ

31



Սոյն ուղղանկիւնը այնպիսի երկու մասի բաժնել որ եթէ կտորները իրարու քով դրուին՝ քառակուսի մը ձեւացնեն:

Մ. Գ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

32.

Չորհասանի՛ եմ մի բառ
Նշանակեմ՝ փոքր ծառ,
Միջառ նարպիկ ու որսորդ,
Եւ մի թռչուն յար ուղղորդ:

Ա. Կ. ԿՏԱՒՃԵԱՆ

33. Ո՛ւր պօռաց ափաղաղը՝ ուսկից բոլոր աշխարհ կըցաւ ձայնը լսել:

Կը խնդրենք ազնիւ ընթերցողներէն որ հանելուկներու լուծումները զատ Խերթի վրայ գրեն, քաղաքին անունը, Խուականը ու վարժարանին անունը եւ ընթերցողի զրով ստորագրեն: Շատ լուծողներու անուններ չեն հրատարակուիր, որովհետեւ անոնց զրկած լուծումը նամակին մէկ անկիւնը զըրուած է:

Մեր նոր հասցէին ուշադրութիւն ընել կը խնդրուի:

شاه بربريان مطبعه جى

استانبول باب على جاده سى نومرو 38

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Կ. Պոլիս Պապ-Ալի ՃաՏՏԷՍԻ թիւ 38

NICHAN BERBÉRIAN

IMPRIMEUR-ÉDITEUR

Stamboul, Bab-Ali Djaddéssi N. 38

Կը խնդրենք մեր Մեծ. Գործակալներէն եւ Բաժանորդներէն՝ որ Հանրագիտակի Երդթիւնն աւելորդ եթէ ունին՝ մեզ վերադարձնելու ջնուրհ ընեն:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ — ԱՐՏՕՆԱՏԷՐ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Ն. ՇԱՆ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պապը Ալի ճատուէսի, Խիւ 38, Իգոտա՛ լրագրի դէմ

THE HISTORY OF THE
CITY OF LONDON

BY SAMUEL JOHNSON

IN FOUR VOLUMES

VOLUME THE SECOND

CONTAINING THE HISTORY OF THE

CITY OF LONDON, FROM THE

FOUNDATION OF THE CITY

TO THE PRESENT TIME

BY SAMUEL JOHNSON

IN FOUR VOLUMES

VOLUME THE SECOND

CONTAINING THE HISTORY OF THE

CITY OF LONDON, FROM THE

FOUNDATION OF THE CITY

TO THE PRESENT TIME

BY SAMUEL JOHNSON

IN FOUR VOLUMES

VOLUME THE SECOND

CONTAINING THE HISTORY OF THE

CITY OF LONDON, FROM THE

FOUNDATION OF THE CITY

TO THE PRESENT TIME

BY SAMUEL JOHNSON

IN FOUR VOLUMES

VOLUME THE SECOND

CONTAINING THE HISTORY OF THE

CITY OF LONDON, FROM THE



Տպագրիչ եւ Փորագրիչ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱԼԻ ՃԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 38. ԻԳՏԱՄ ԼՐԱԳՐԻ ԴԻՄԱՅ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պօղոսեան
Ասափազար, Ստեփան էֆ. Սափրիչեան
Աֆիոն Դարահիսար, Աշոտ էֆ. Պաղպաղեան
Եւրոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կիւրին, Միսաք էֆ. Խանդամուր
Հալեպ, Ս. էֆ. Ամատեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան
Մարաշ, Արծ. Տ. Նէրսէս Բէ. Շահինեան
Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Աղարեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սրվազ, Միհրան էֆ. Իսախրեան
Սիւս հանի քոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Վեզիր քոքրիկ » » »
Տիարպէփր, Լեոն էֆ. Սրապեան

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՇԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ


Հին Ուխտի (Սրբազան պատմութիւն)	4
Նոր » » »	4
Ծաղկաքաղ (Հնտիր կտորներ ընթերց.)	3
Ֆրանսերէն պատկերազարդ փերական	2
Կ. Տէմիրեան էֆ. Ի Իրագիտութեան Ամբողջական դասընթացքը	
Ծաղկաքաղ եկեղեցական պատմութեան	4
Քրիստոնէական (Ս. Խանճեան)	2
Ժողովրդական Տարեցոյց	6
Բուրաստան Մանկանց (Տարեկանը)	10
Աղօթագիրք	10



Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Ե. Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ և թէ օր ըստ օրէ
ամենող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմիջեղի ածանու թեամբ
գոհացում տալ նոյն իսկ էն խստապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ Ե. ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կը
կատարուին ամենայն ճշգուծեամբ.

Աժառն, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք ան-
ղամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Ե. Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի
կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

Ա. Ժ. Ա. Ն

Ա. Ժ. Ա. Ն

Ա. Ժ. Ա. Ն

Հանրագիտակ ձեռքի կը ծախուի Պոլսոյ մէջ հատ
40, իսկ գաւառաց մէջ 50 փարայ: